ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, 0213, Բյուրական համայնք, 1-ին փող., շ. 68:
Հեռ.(0232)94600; http:byurakan.com.am; e-mail:byurakan.aragatsotn@mta.gov.am

N 07.20/3 Ե-172
« 03 » օգոստոսի 2020թ.

«ՍԼԱՎՍՏՐՈՅ» ՍՊԸ-Ի (ՀՎՀՀ 04427069)
ՏՆՕՐԵՆ Ս.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՝ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ,
Գ.ԴԱԼԱՐԻԿ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 48
էլ. հասցե՝ slav.stroi2018@mail.ru

ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրականի համայնքապետարանի և «Սլավստրոյ» ՍՊԸ-ի միջև 24.07.2019թ. կնքված N ՀՀԱՄ-ԲՅՀ-ԳՀԱՇՁԲ-19/15 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և Պայմանագրին կից 25 Հուլիսի 2019թ. կնքված N1 համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 120 օրացուցային օրվա ընթացքում՝ 2019թ. մինչև նոյեմբերի 22-ը, որը ՀՀ կառավարության 24.12.2019թ. N 1910-Ա որոշմամբ երկարացվել էր մինչև 01.08.02020թ., պետք է իրականացներ Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Բյուրական համայնքում մետաղական խողովակներով և մետաղական ցանցով իրականացվող թվով երեք ցանկապատերի կառուցման աշխատանքները, սակայն Ձեր ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն իրականացվել նշված աշխատանքները:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.4 կետի բ) ենթակետի պահանջները՝ Բյուրականի համայնքապետարանը 2020թ. օգոստոսի 3-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Սլավստրոյ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900445117139 հաշվեհամարին փոխանցել 44500.0 (քառասունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը որպես տուգանք՝ Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ենթակա է գանձման 890000.0 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

Համայնքի ղեկավար՝ / Զ. Բաբայան /